


ԲԱԺԱՆՈՐՈՒ ԱԳՐՈՒԹԻՒՆ

Պաշտոնային համար  
Տարեկան 10 Ձր.  
Վեցամսեայ 5 »  
Արտասահմանի հա-  
մար տարեկան 12 »  
Վեցամսեայ 6 »  
ԿԱՆԻՒԿ ՎՃԱՐՆԵԼԻ

—(—  
Գրութիւնք ևս չեն տրուիր  
—(—  
Ծանուցման տողը 20 սան-  
քիւն է. երեքին աւելի աւել-  
ցումներու համար 20 Օլո  
գեղջ կը լրացայ:



R. P. Kalémkarian  
(Autri-he)  
Mehlhans Angasso-W. 4  
Vienna

Լատակ եւ դրամ դրկեչ  
ապրութեան հասցին  
—  
Редакция на вестникъ  
«Шаржумъ»  
Варна.  
Redaction du journal  
«Charjoum»  
Varna (Bulgarie)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔԵԱԲԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՈՐԵՐԸ

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

ՊԱՏԱԿԱՆԱՏՈՒ Յ. ՍՈՒՔԻԱՍԵԱՆ



Հեռագիրը այս պահուստ տխուր  
գուժ մը կը հայտնուի մեզ:  
Համայն Գաղարիւն սիրեցեալ  
անգրանիկ իշխանուհին:

ՄԱՐԻ—ԼՈՒԻԶ

Երեկ ժամը 11.10ին աւանդեց  
հոգին:  
Այս անակնկալ գուժը բոլոր  
Պաղարիւն խորատի մէջ ձգեց:  
Սեւ գրոջակներ քաղաքիս ամէն  
կողմ պարզուած են. Ամէն կարգի  
հիմնարկութիւններ վակուած են,  
որոց մէջ նաեւ քաղաքիս հայ  
վարժարանները:

ՄԵՐ ԹԱՓԱԾ ԱՐԵԱՆ ԱՐԴԻՒՆԸ

Երբ հայկական յեղափոխու-  
թեան կենսարար ոգին որոտաց—  
հայ մարդ, բաւ է որչափ սոցա-  
ցեր, ուշքի ե՛կ, ցնցվի՛ր, ապ-  
րիւր պատասխանիր ժողովրդի  
նման, ազատ մարդուն վայել  
կեանքով կամ թէ ոչնչացիր և  
տեղի տուր քեզինց աւելի բար-  
ձր ու արժանաւոր ժողովրդի—  
ամենախաղաղ և օտար անկիւննե-  
րում ապրող հայութեան մէջ  
անգամ մի տեսակ իրարանցում,  
ազգային նոր և ազատ կեանք ու-  
նենալու բաղձանք առաջացաւ:  
Սակաւաթիւ և ի ծնէ յեղափո-  
խական հայ անհատները արձա-  
գանք աւելն այդ նոր կեանք ա-  
ւետող կոչին և առաջ անցան  
կուսիւ օտար բռնակալի դէմ  
կէտ նպատակի ունենալով՝ մի-  
միայն թուրքի լծից ազատվելը:  
Հայ ժողովուրդը չը ցնցվեց, չը  
հետեւեց մեր յեղափոխութեան  
կարապետներին, որովհետեւ  
ամբողջովին ստորուկ էր, հոգով  
և մարմնով, ոչ միայն Սուլթանի  
ստորուկ, այլ և մտտոր խտարի,  
ստրկական ամենազրուելի յատ-  
կութիւնների, իրանից աւելի  
տգետ վաշխառու ազգայի և կղե-  
րի... ժողովուրդը արչինի, գոթա-  
նի և խոչի հետ միասին չը վեր-

ցրեց և զէնքը գոնէ պաշտպան-  
փիլոս համար, գրան համար էլ  
ատանակ հազարներով զոհ տեց:  
Զահերի արիւնը ողորցեց ամ-  
բողջ հայ աշխարհը, հոտը գի-  
պու իւրաքանչիւր հայի քթին,  
զոգոնց նրա արեան վրէժի ծա-  
րուր, ամբողջ հայութիւնը ա-  
յիկոծվեց, ցնցվեց, սկսվեց  
քննադատութիւն, մտքերի իրար  
բախում, և ստեղծվեց ներկայ  
աւելի գիտակից, վճռողական,  
մեր վերածնութեան գործի դըժ-  
ւարութիւնները ըմբռնող, պող-  
արիւն և համբերութիւն ունեցող  
յեղափոխական տարրը, որը  
պատրաստվում է ազատել հա-  
յութիւնը ոչ միայն Սուլթանից  
այլ և իրար ստրկական յատկու-  
թիւններից, որոնք արգելում են  
մեզ ազատ ժողովուրդ լինելու  
եռան փափագը ունենալ և զոհու-  
ղութեան ընդունակ լինել:  
Գետի նման հոսում արեան  
արդիւնքը եղաւ ներկայ յեղա-  
փոխական տարրի երեւան դա-  
լը, որը դեռ իր որբանում տա-  
պալեց հայութեան բորբոսնած և  
մահաշունչ հեղինակութիւննե-  
րին, որոնք երկար տարիներ  
ժողովրդի վրտին անցած՝ կանգ  
էին առել քարայցման կէտի վրա  
և արգելում էին առաջ խաղալ  
դէպի իսկական ազատութիւնը:  
Մենք ուրախ ենք որ հիմա  
յեղափոխական անհատների փո-  
խարէն կազմակերպվեց յեղա-  
փոխական տարրը, որովհետեւ  
այդ անպայուցանում է թէ մեր  
որախոյսով եղբայրների արիւնը  
չուր չթափվեց և յեղափոխա-  
կան տարրը չուտով կը վերածվի  
յեղափոխական ժողովրդի: Մենք  
սգում ենք մեր մորթված եղ-  
բայրների վրայ, բայց համոզ-  
ված ենք որ նրանց արիւնը  
չուր չը թափվեց, ինչպէս կար-  
ծում են մեր աշխարհական և  
հոգեւոր «չորանները», որովհե-  
տեւ այսօր տեսնում և զգում ենք  
թէ մորթված Հայաստանցիներ  
ի կրօնային և զաւակները  
հասկացել են զէնքի փրկարար  
լինելը, շեն ուշում մորթվել, հե-  
տազհետէ կազմում են մեր յեղա-  
փոխական տարրի ժողովրդային

մասը և մեր յեղափոխութիւնը  
դիմացկուն և անընկճելի գարձ-  
նում մինչեւ յաղթանակի վայր-  
կեանք:  
Պատմական անհերքելի ճշմար-  
տութիւն է, որ ստորուկ ժողո-  
վուրդը մինչեւ չը մորթվի մոր-  
թել չի սովորի: Հայը մորթվելու  
չը ջանը անցաւ և մտաւ թշնա-  
մուն մորթելու շըջանը: Երբ սո-  
վորեցինք կեանքերս պաշտպա-  
նել, լուսաւոր մարդկութեան  
գութը շարժեցինք: Երբ սկսինք  
թշնամուն մորթել և կեանքերս  
թանկ ծախել, ասպետական ազ-  
դերի յարգանքը և աջակցու-  
թիւնը կը ստանանք:  
Թո՛ղ Եւրոպայում զառանցող  
պէս պէս «չորանները» ազատու-  
թեան համար արիւն թափելը  
հրէշային գաղափար անւանեն  
կողորդելուս արցունքներ թա-  
փելով այն Հայաստանցիների  
վրա, որոնցով մինչեւ այժմ եր-  
բէք չեն հետաքրքրվել և իրանց  
քնքու ժողովներով շուր ան-  
գամ չեն աւել Բոսֆորի ափերում  
բռնան տակը կորացած ծարաւ  
հայ գեղջուկին: Մորթված Հա-  
յաստանցիների հարազատ, կարե-  
կից և վրէժխնդիր եղբայրները  
երբէք չեն հաշտվի այդ «չորան-  
ների» հարեմական սկզբունքների  
և առաջարկած միջոցների հետ,  
որոնք Բոսֆորի «սկուճրիկ» և  
«թափլը սու» Ֆրանսուհիների  
կարօտած մեղկ սրտի դաղունի  
իզների արդիւնքն են...  
Այո՛, հայկական արիւնը թափ-  
վեց, և շատ, բայց ոչ զուր-  
գույց աւելի, բայց այդ արիւ-  
նից գոյութիւն ստացաւ հայ  
յեղափոխական տարրը իր վրէժ-  
խնդիր զինակիցներով, հայկա-  
կան վերածնութեան գործը ցը-  
նորքի շըջանից անցաւ իրական  
հողի վրայ և առաջ կերթալ տե-  
լի հաստատ, աւելի սպառնական  
քայլերով ու մեր յեղափոխական  
տարրը, փոխանակ մորթվածնե-  
րի արիւնը մոռանալու և Սուլ-  
թանի արիւնտ ձեռքերը լիզելու  
ինչպէս անում են հարեմական  
կեանքի ծնունդ «չորանները»,  
սրբութեամբ կը կատարէ իր  
պարտքը դէպի իր մորթված

եղբայրները և դէպի ստորուկ,  
բայց ազատութեան կէտ ճամբան  
արդէն անցած հայրենիքը...  
ՎԱՐԴՕ

ԳԵՏԻ ՄԸ ՄՕՏ

- Ձիւնք ու պայծառ գնիւ մը սօս  
նսսած էի մեկ առաւօս,  
Չորս կողմ սփռու անուշ գեփիւն,  
Քարեան քոյրեր հագար ու քիւր:
- Յանկարծ ձայնեց՝ գեք մեղմով,  
Իր ափերէն վար սողալով,  
«Ինչո՞ւ հայ, ըսաւ, ինչո՞ւ սփռուր»  
«Լռիկ մաշխալյուսակսուր»:
- «Անիսու շուրփի, կնճոռոս ճակից»  
«Վերայ ո՛չ յոյս կայ ո՛չ ժրպիտ»:  
«Ըսէ՛ ինձի, ըսէ՛ հոգիս»  
«Ի՞նչ կը խոսաս, ի՞նչ ցաւ ունիս»:
- Ճնշեց հոգիս, զարկաւ սրտս,  
Գնեցի շէշք սուր ևնի պիս,  
«Վազի՛, ըսի, գետակ գնա՛»  
«Թո՛ղ իմ ցաւս ինձի մնա՛»:
- «Ձիւնքս ինչպիս գոռաց յանաւս»  
«Հայու երկինք անգութ իսպառս»:  
«Հայ զաւակներ եղան ցանցիտ»:  
«Ու հոյսն քան մը չընցիտ»:
- Սարսուղի, քնչաց կրկին,  
Ուժով սուրեց գեք կրկին,  
Կասաղաքեանք ժայթեց հեղեղ,  
Եւ զոչեցին աչիք ահեղ:
- «Մեկիլ՛ շացր, ձեռքդ գեք մ'ոն»:  
«Անի՛ր ք, բա՛ւ ողբաս հինգ րատ»:  
«Կուտի դաշքը փնտր՛ի դուն»  
«ՀԱՅՐԵՆԻՔԻՒՆ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ»:  
ՎԷՏԱ

13 Յունուար 1899

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Նիւ-Եորք, 5 Յունուար  
Սոգատան՝ Ձէյթունցիները  
քանի մը ամիս ալ գիմանալու  
են... անօթութեան: Ի՞նչ կը լը-  
լայ, Գրիստոս Ձէյթունցի չըլլա-  
լով, և ոչ ալ անոնց չափ յաղ-  
թանդամ, քառասուն օր անօթի  
կեցաւ անփնաս: Քարի զաւակնե-  
րը իրենց սարերու բեկորները  
կըծելու են մինչեւ որ այս հե-  
ռաւոր աշխարհին մէջ ապրող  
իրենց հարուստ հայրենակիցնե-  
րու քար սրտերը կակղան ու  
քանի մը փարա տան Ձէյթուն-  
ցիներուն հացազին մը զրկելու  
համար:

Ամերիկայի ի վեր է որ Միաց-  
եալ Նահանգաց հայ գաղթական-  
ութիւնը սկսած է իր մէջ  
հանգանակութիւններ ընել ինը-  
պատ քաղցած Զէյթունցիներուն.  
հրապարակային փոքրիկներ, մաս-  
նաւոր յանձնախումբեր, ան-  
հատներ և տեղական թերթ մը  
հազիւ հազ 1,000 տղար կրցին  
գոյացնել այդ նպատակին հա-  
մար, և այս գումարն ալ անշարժ  
կը պահէին Ամերիկեան դրամա-  
տան մը մէջ, առանց մէկ սէնթ  
զրկուած ըլլալու խեղճ Զէյթուն-  
ցիներուն որոնք այս վայրկեանիս  
թիւրեւս ուտելիք հաց ալ չու-  
նին: Եթէ այսպէս շարու-  
նակուի, տակաւին շատ ժամանակ  
պիտի անցնի, և փոխանակ պա-  
տառ մը չոր հացի գին չըրկելու  
Զէյթունցիին, կանգուն մը ճեր-  
մակ կտաւի գինը պիտի ստիպ-  
ուինք զըրկել անոր սովամահ  
գիւակին համար:

«Միացեալ Նահանգաց Զէյ-  
թունի նպատաստանոց Կեդր-  
յան ձեռնարկութեամբ շարժելու է,  
մէկ րոպէ առաջ իր արամա-  
գրութեան տակ եղած գումարը  
ապահով միջոցով հասցնելու  
համար իր նպատակին»:

Անցեալ գիշեր շքեղ, լուսա-  
զարդ սրահի մը մէջ նիւթորքի  
զազուի ժողով մը շարժած  
բերած էր հեռը հաղար ու մէկ  
տեսակ իրեզիւններ՝ ի նպատակ  
Զէյթունցիներու հանգանակու-  
թեան՝ աճուրդով վաճառելու  
համար:

Մասնաւոր նուէրներէն բաւական  
կոկիկ գումար մը գոյացաւ: Սա-  
կայն բոլորովին տարբեր ար-  
գիւնք պիտի ունենար աճուրդը,  
եթէ նիւթորքի բոլոր հայերը  
գտնուէին այս սրահին մէջ:

Այս անգամ ալ քաղաքիս հայ  
մեծատունները իրենց սովորու-  
թեան համեմատ, չի մասնակցե-  
ցան դժբախտ Զէյթունցիներու

օգնութեան գործին, որովհետեւ  
իրենք «քաղաքական նպատակ  
մը կը տեսնեն եղբր Զէյթունցի-  
ներուն խած մը հացի դրամ  
զրկելու մէջ...»: Անտարբեր  
հարուստ ազգատեացը, հաւա-  
տարիմ իր Սուլթանին, նոյնիսկ  
այս ազատ երկրին մէջ, սէնթ  
մը չի տար հայրենիքի համար  
կուռնող քաջերուն: «Այսօր կը  
կշտանայ, վաղը նորէն զէնքը  
ձեռք կառնէ»:

Ձէ, քաջին, անվեհեր ազ-  
գասէրին շօգներ թուլամորթ  
հայ հարուստը:

Աճուրդի հանդէսին մէջ եր-  
գեց ինքնաբերաբար նշանաւոր  
«մերիկուհի մը հայերէն լե-  
զուով «իմ զաւակունքս կը թա-  
փառին» և «իմ հայրենիք զիս  
կը կանչէ» երգերը, սրտաբուխ և  
յուզիչ ձայնով: Ետ հայեր լա-  
ցին, լացինք մանաւանդ երբ  
զգացինք այն կծու հեզութիւնը  
որ օտար օրիորդը կուղղէր սը-  
րահէն բացակայ եղող հայերուն:

Ինծի համար հանդէսին ամե-  
նէն հաճելի և ազգու մասը,  
հայ մեծատունի մը, Պ. Տ. Քէ-  
լէկեանի ճառն էր, կանխա-  
պատրաստուած ճառ մը որով  
հանդէսին եկող հարուստը շատ  
կծու, շատ ազգու խօսքերով կը  
յարձակէր իր գասակարգին  
վրայ, որք քաղաքական պա-  
ճառներ բերելով, չէին եկած  
այդ գիշեր հանդէսին:

Ո՛հ շատ հաճելի, և նոր ե-  
րեւոյթ մըն էր. հայ հարուստը  
հայ հարուստին վրայ կը յարձա-  
կէր, ո՛չ թէ շուկայի գծուժ հա-  
շիւներու համար, այլ ազգային  
կենսական խնդիրներու պատճա-  
ռով:

—Նիւթորքի հայ երիտասար-  
դութիւնը մօտիկս ի նպատակ  
Զէյթունի պիտի ներկայացնէ  
Մեծն Ներսէսի ողբերգութիւնը:  
Եթէ հարուստները իրենց գծուժ  
հաշիւներու համար հայրենիքի

կորստեան կը ցանկան, հայ ե-  
րիտասարդութիւնը բոլոր, անձ-  
նական հաշիւներէ վեր մէկ նը-  
պատակ միայն ունի. այն է հայ-  
րենիքի և ազգին փրկութիւնը:  
Թ. Չ.

Խաչատր-Բագարշիկ 5 Յնվր.

Տեղւոյս Թաղ. խորհրդին  
մասնաւոր հրահրովը, քաղաքս  
հասաւ Տ. Գէորգ Մ. վարդապետ  
Նալպանդեան, որ արգէն ծանօթ  
էր Թ. Բագարշիկներու 3—4  
ամիս առաջ իր կատարած այ-  
ցելութեամբ, և իր առաքինի  
ու պարկեշտ վարքով ամենուս  
ալ համակրութիւնը վաւերաց  
արգէն: Որովհետեւ մինչեւ հի-  
մա մեզ գոհացնող պարտաճա-  
նաչ քահանայի մը չէինք հան-  
դիպած, այս անգամ գիւմրցիք  
Փ. Պոլսոյ ազգային վարչութեան  
խնդրելով որ Գէորգ վարդապետ  
մեզ մօտ զրկեն իբրեւ հովիւ:  
Բարի Հայր սուրբը սիրայօժար  
ընդունեց մեր աղբար Բագար-  
շիկներու աղու հացը և յուն-  
ուար 12ին հոս եկաւ: Թաղ.  
խորհրդոյ անդամները և բազ-  
մաթիւ պատուաւոր ազգայիններ  
կայարան գացին գիւմարելու:  
Հայր սուրբը յնվր. 13ին հան-  
դիպաւ որ պաւարագ մատոյց  
ի ներկայութեան խումբ բազ-  
մութեան: Մեր քաղաքը խաղաղ  
է ու ջանքեր կընէ ազգին այս  
ընդհանուր վերածնութեան մէջ  
իր բաժինն ունենալու: Փոքրիկ  
ու աղքատիկ վարժարան մը ու-  
նի զոր ըստ կարելոյն բարե-  
կարգելու համար կաշխատին տե-  
ղացիք: Ներքին վէճերը դադ-  
րած են շնորհիւ ազգայնոց մէջ  
տիրող համեմալութեան ոգիին,  
թէ և երեւեցան մէկ քանի թա-  
փառաշրջիկ խաչագողներ, բայց  
հաց չի գտնելով շուտով հեռա-  
ցան գլխիկոր:

—)(—

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՅԻՇԱՍԱԿՆԵՐ

Մուշ քաղաքը բայց իր տե-  
ղական վարժարաններէն ունէր  
նաեւ Միացեալ ընկերութեան  
ներսէսեան բարձրագոյն նախա-  
կըրթարանը՝ որ, մօտ 15 տար-  
ուան մէջ, բաւական ընթացաւարտ  
սաներ արտադրած է: Բայց վեր-  
ջին ընդհանուր կոտորածէն ետք,  
մեր ազգային կեանքի մէջ տի-  
րող տագնապին պատճառով կըր-  
թական այդ օգտաշատ ընկերու-  
թիւնը՝ շատ տեղերու նման՝ այդ  
դպրոցն ալ ստիպուեցաւ փա-  
կել:

Մուշ քաղաքի թիկունքը կը  
բարձրանայ Սիմօսարը, որուն  
լանջքին, անմատչելի ցլուածքի  
մը վրայ կը տեսնուի Մուշեղ Մա-  
միկոնեանի հակաբերդերուն ա-  
ւերակները, որոնք իրենց ներկայ  
կիսաւեր ու ամայի վիճակին մէջ,  
Մամիկոնեանց անցեալ փառ-  
քը կը պատկերացնեն դարե-  
րու մշտնջող ծածկուած: Այս  
բարձրութեան հետաքրքիր գի-  
տողին աչքին վսեմ տեսարան մը  
կը պարզուի: Հայնատարած Մշոյ  
դաշտը, իր 15—20ի մօտ հայ  
նշանաւոր գիւղերով ու ոլորա-  
պոյտ Մեղրագետով, ակնա-  
պարար երեւոյթ մը առաջ կը  
բերէ: Տարօնոյ այս պատմական  
դաշտին երկայնութիւնը 12—14  
ու լայնութիւնը՝ 5—6 ժամ է  
գրեթէ: Հոս, այս դաշտին մէջ  
կը տեսնուին վարդենիս, Ար-  
տոնք, Սուլխ, Խասփուղ,  
Յրոնք և դեռ ուրիշ շատ մը  
նշանաւոր հայ գիւղերը: Յրոնք,  
ուրկէ ցրուեցան ու բաժնուեցան  
Տարօնի որդիքը: Այս գիւղի հո-  
ղերէն կը գոյանայ վառօդի հում  
նիւթը, ճերմակ ծծումբ: Հոս՝  
այս դաշտին մէկ կողմը կը  
տեսնուի Հավրան բազմամարդ  
հայ գիւղը, —Ներսէս վարդապետ  
Խարախանեանի ծննդավայրը—  
Մատնավանքէն ոչ նուազ հեռու:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՏԿԵՐՆԵՐ

ՈՒՐՈՒՆԱԿՆԵՐ ( )

ՊՈԼՍԱԿԱՆ ՅԻՇԱՍԱԿԵՐ

Վերջին դէպքերէն ետք, երբ կըր-  
կին այս տխուր քաղաքը վերադար-  
ձայ, հոգին այն սուղի օրերուն սար-  
սափով լինուն. անտուն գերեզմանի  
մը տպաւորութիւնը թողուց վրտա:  
Բնութեան զեղեցկութիւնները ինծի  
թառամած կերելային, դատնութիւն  
մը կը նկատուէր ամէն դէպքերու  
վրայ, և հակառակ անցած բաւա-  
կան երկար ժամանակին սրտերը տա-  
կաւին չէին հանդարտած: Բնակչու-  
թեան կէտը մեկնած էր, փողոցներն

( ) Իւսանկիթ Նոյվիչ հանդէսէն  
թարգմանուած

ամայացած էին. միմուրտին մէջ  
խողովի բան մը կար, որ ամէն իրի-  
կուն իր հետ կը բերէր կոտորածի օ-  
րերուն արհաւիրքն ու շարժարանքը:

Կինրու դիւցազնական միջամտու-  
թիւնը այդ դէպքերուն մէջ գողտր  
յուզում մը առաջ բերած էր, և ի-  
րենց անունը տեսակ մը կրօնական  
յարգանքով կարտասանուէր: Ոմանք  
մեկնած էին, ուրիշներ բանտին սեւ  
միմուրտին մէջ կապրէին տակա-  
ւին, մէկ քանիներ ալ վերջապէս,  
իրենց արիւնը զոհերու արեան խառ-  
նած էին:

Իմ հին բարեկամներուս մէջ դե-  
ռատի օրիորդ մը գոյայ որ բանուէն  
կլիկուն պէս հիւանդ ինկած էր այդ  
օրերուն յուզման ազդեցութեան  
տակ: Յաճախ կը տեսնէի զայն, և  
հակառակ այս մասին պահած բուռ-  
թեանս—որովհետեւ ծնողքը ինչ  
խնդրած էր զգուշանալ այդ նիւթին  
վրայ խօսելէ—ինք ամէն ժամանակ  
անով կը զբաղեցնէր մեզի: Մերթ  
յուզուելի վախնալով, դժուարաւ կը  
խօսէր, աղճատուած բառերով. բայց

երբեմն տեսնողս ջղաճգութիւններով  
դէպքերը կը պատմէր անընդհատ,  
սուր ձայնով մը, ուր բառերը հեծե-  
ծանքներ կը լլային ու կը խեղդէին  
իր ձայնը վերջապէս:

Օր մը միասին շրջագալութեան  
ելած էինք: Հորիզոնը մութ խոնա-  
ւութեամբ մը պատած էր և կարծես  
քիչ քիչ կը ցածնար: Տխուր էինք,  
շատ տխուր: Ներս մտանք այն պար-  
տէզէն ուր կը գտնուէր մեր սիրելի  
եղևիկը ու մեր տխուր ուտին: Այն  
տեսնելու, ուրիշ ցուցնելով ըսաւ ինծի  
բարեկամուհին:

—Հոն երթանք:  
Իր ձայնը կը դողդար, կը վաղէր  
գրեթէ և անհասկնալի բառեր կը  
մրմնջէր: Վերջապէս, շնչապառ մեծ  
ուռիին տակ հասանք: Անձկագին կը  
ջանայինք զմեզ ծածկել ծառին ճիւ-  
ղերուն տակ, որուն երկար տերեւ-  
ները անհամար մատներու պէս զգալի  
ջրկայքը կախուելով, կարծես կու-  
զէին անարկու բան մը ցուցնել մեզի  
խուսափակ ջուրին մէջ: Դանդաղօրէն  
կը շնջէինք և ինծի այնպէս կը

թուէր թէ օդն իսկ արեան համ ու-  
նէր:

—Հոս է, ըսաւ վերջապէս բարե-  
կամուհին, որ վերջին անգամ տեսայ  
Զարուհին, այն ահաւոր գիշերը.  
հոս, այս ծառին տակ:

Յետոյ լուց, ալ չի կրնալով խօ-  
սել. բայց իր շունջին տաքութե-  
նէն, իր մոլոր նայուածքէն, բմբռո-  
նեցի իր բոլոր յուզումն և իր բոլոր  
սարսափը: Հոգին վրայ նստեցանք:

—Ձեմ կրնար խօսիլ. ամէն բանի  
յիշատակը յանկարծ միտքս կուգայ:  
Իր աչքերը, իր ձայնը... և իր  
մեկնումը մանաւանդ: Անդին գնաց,  
սիրտը արիւթ թեմբը լցուած:

Եւ մատով ինծի կը ցուցնէր տխուր  
մացառ մը իրարու մէջ անցած փոռ  
թուփերէ հիւսուած: որոնք մեղմիւ  
կը շարժէին: Այն միջոցին, ազոաւ-  
ներ ուռիին ճիւղերէն թոշկելով մեր  
զլխուն վերեւէն կանցնէին, պատ-  
ռելով օդը իրենց սգեղ ու տխուր ա-  
ղաղակներով: Պարտէզին յուր թեան  
մէջ, մեզի կը թուէր թէ այս սուր  
աղաղակները մեր ուզեղը կը ծակ-

Այս ընդարձակ դաշտէն դէպի արեւելահայաստան՝ Արածանի կամ Մուրատ գետէն ու Սուլուխ հայ գիւղէն անդին, կը տեսնուին պատմական Աշտիշատի բնկորները: Մեր նախնեաց սիրելի ու մեր ազգին պաշտպան նկատուած շնորհաշուք Անահիտի նուիրուած սաճարին վայրը ուր յետոյ մեր լեզուի ու գրոց գիւտի անմահ ստատարիչ, Սահակ Պարթեւ Հայրապետի անուան ձօնուած սաճարը կանգնուեցաւ: Ան դարբու ընթացքին մէջ, այդ հոյակապ ու պատկառելի շէնքին յաղթապանձ կամարներու ներքեւ Գողգոթայի անտառտ ողջակէզին յիշատակը նուիրագործուեցաւ, մինչեւ որ Լէնկիթեմուր իր աւերիչ բանակներով ագուաւի պէս մեր հայրենիքը խուժեց, ու ամէն հասած տեղ աւեր ու արհաւիրք սփռելով, այդ հայկական հսկայ ու անմահ շէնքը հիմնոյատակ ու անհետ ընելու շար գիտումով, իր անհամար զօրաց միջոցաւ անոր քարերը ձեռքէ ձեռք փոխադրելով՝ Սուլուխ հայ գիւղի քով համանուն մեծ կամուրջը շինելու առաւ եփրատի վրայ: Աշտիշատէն ոչ շատ հեռու է Հացիկ հայ գիւղը: Ս. Մեսրոպի ծննդավայրը, որ իր գողորիկ երեւոյթով ու 100 տունէ աւելի բնակիչ հայերով, մեր ոսկեղինիկ տառերը հեղինակողին արժանի հայրենիք ըլլալու փառքն ունեցած է: Հոն, Տարօնոյ բարձր սարերու գլխին, յաղթական կոթողներու նման կը կանգնին Ս. Կարապետի, Խորգամանչաց ու Ս. Յովհաննու վանքերը: Իննակեան լեռները՝ պատմական տեսակետով նշանաւոր են մեր ազգային բնապաշտական կեանքի մէջ: Հոն՝ այս սարերու վրայ մզեց Ս. Լուսաւորիչ՝ կրօնական այն ներքին մարտը իննակեան բարձր մեհաններու ու բաղնիքներու շուքին ներքեւ ապրող քուրմերու

ու բնապաշտ արեւնակիցներու գէտ, ու վերջապէս Տրդատի հզօր բազկով այդ նիւթապաշտ տարրըն ջնջելով, խաչուած Աստուծոյ անունով ու Ս. Կարապետի նշխարհով նուիրագործեց Գլակայ հիւսարանչ մենաստանը, որուն անցեալը որքան փառաւոր, ներկայն այնքան տխուր ու սրբատաճմուկ է: Այս վանքը՝ որ իր իրաւասութեան տակ գտնուած ընդարձակ հողերու տառտ արգիւնքներով այնքան ճոխութիւն ու բարոյական ուժ կը ներկայացնէր՝ ու իր բարեկարգ օրերուն, Հարք գաւառին, Մանազկերտի, Խորխոռուեհաց, Մշոյ աշխարհին ու Սալնոճորոյ համար բարգաւաճութեան որբան հանդիսացած էր, տակաւ տիրող թրքական յոռի քաղաքականութեան ու Պոլսոյ Պատրիարքարանի անզօր ու մեղկ վարչութեան եւրեւէն իր կոչման հակառակ վիճակի մը ենթարկուելով, վերջին հայկական ընդհանուր արհաւիրքներուն, համիտիլէ քրդաց պաշտութեամբ իր բոլոր ուժերէն մերկացած է: 1891 թուականին այս վանքի արժանաւոր վանահայր, հայրենիքի ինքնաբոյս զաւակը, ներսէս վարդապետ Խարախանեան ձերբակալուելով, երկու տարի Պիթլիսի բանտին մէջ կը պահուի, վանքը իր ճակատագրին կը յանձնուի անկէ ետեւ, ու այդ վանքի մէջ, սատանայի բուն դրած քանի մը սեւ հոգի վարդապետներ՝ որոնք Հայրիկի օրէն ի վեր ամէն օգտակար գործի հսկառակ, ու եւսամուլութեան օրինակ են հանդիսացեր, կը սկսին իրենց յիմարական գերբոր խաղալ:

Ի Ա Հ Ա Պ Ե Տ

(Շարունակելի)

—)(—

ծկէին հերիւնի հարուածներու պէս: Անձկանօք իրարու ձեռք կը սեղմէինք, յետոյ, սաստիկ գերագրգռութենէ մը յափշտակուած, գլուխը խոնարհեցուց եւ սկսաւ լալ, տխուր ու անվերջ հեծեմանքներով: Իրենց վրայ կը հասնէր սեւ շուք մը տարածուեցաւ լքուած պարտէզին մէջ: Դռները ալ սեւ կերեւոյթին եւ իմ գրգռուած երեւակայութեանս մէջ ամէն կերպարանք կմախք մը կը թուէր եւ ամէն գոյն, արիւն: Հիւսայ, կուզէի մեկնիլ առանց այս աղջկան պատմութիւնը լսելու, փախչել հեռու, այնքան հեռու որ ոչ մէկ արձագանգ այս արցունքներէն, այս հեծեմանքներէն չի կրնան մինչեւ ինձի հասնիլ: Հեռուէն քաղաքին միզպատա մասը զիս կը ցնորէր կարծես վարագոյր մըն էր ան որուն ետին կը ծածկուէր այն օրերուն կարմիր պատմութիւնը: Բարեկամուհին կանգնած էր եւ տարտամօրէն իր շուրջը կը դիտէր ձեռքս բռնեց ու բռն: —Ներք ինձի, պիտես որ առաջ

այսպէս չէի, քայց այն օրէն ի վեր հիւանդ եմ, մանաւանդ երբ հոս գամ: Եւ հակառակ բոլոր ատապանքներուս, հակառակ անցուցած անարկու գիշերներուս, յաճախ այս ուրիշ տակ կանցնեմ երկար ժամեր: Այս ծառքքով մը պէս կը սիրեմ, միասին լացած ենք սիրեցեալ կակի մը վրայ: Յետոյ աճապարանօք պատմեց, իր թէ բառերը մէյմէկ հարուածներ ըլլալին իրեն: —Այն իրիկուն, Չարուհի եկած էր զիս տեսնելու. դժգոյն էր ու խիստ յուզուած. խնդրեց իրեն բնկերանալ եւ հոս եկանք առանց ճանքան բառ մը արտասանելու: Երբ այս ծառին տակ հասանք, ըսաւ ինձի. «Այս գիշեր ըսելիքս գաղտնիք մըն է. վաղը չարագոյր օր մը պիտի ըլլայ. պարտականութիւնս զիս կրօնուի կը հրաւիրէ. երբեք թերեւս պիտի չի կրնանք վերստին զիրար տեսնել»: Իր զիմագծութիւնը տեսնողս արտայայտութիւն մը ունէր, իր նայուածքը ինձի երկիւղ կը պատճառէր. «Լեռներ չի տեսայ», աւել-

### Ք Ր Ո Ն Ի Կ

Յիւլիպէի շրջակայ գիւղերէն և գիւղաքաղաքներէն մեզ հասած մասնաւոր թղթակցութիւններ, խիստ դառն կերպով կը խօսին Տ. Արսէնի շահասակութեանց վրայ, որոնց տխուր համբաւը իրենց ականջն ալ հասած է, և որոնց պատճառ Ս. Մենդեան տօներու առան, հակառակ սովորութեան, ստիպուել են գիւղերը մնալ ու զրկուիլ եկեղեցական արարողութեանց մասնակցելէ:

—Իսլիմիական յնվր. 14 թուականով կը գրեն թէ անցեալ կիրակի տեղւոյն Հայոց եկեղեցւոյն մէջ, յատկապէս հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ ի յիշատակ Լուսար փաշաի: Յաւակցական հեռագիր մը զըրկուեցաւ Վառնայի հայութեան կողմէ Լուսարեան ընտանիքին:

—Նման պէս անցեալ կիրակի քաղաքիս եկեղեցւոյն մէջ, յաւարտ պատարագի, պաշտօն կատարուեցաւ ի յիշատակ Լուսար փաշաի: Յաւակցական հեռագիր մը զըրկուեցաւ Վառնայի հայութեան կողմէ Լուսարեան ընտանիքին:

—Օրմանեան Սրբազան Պատրիարքը «Սէրվէթ և Մալիմաթ» պաշտօնական թերթերու տնօրէնին շնորհակալութեան գիր մը զըրկած է, վերջերս իր թերթին մէջ Հայոց նկատմամբ զըրած գովեստներուն համար, ու խնդրած է որ, եթէ կարելի է, ասկէ ետքն ալ նմանօրինակ յօդուածներ գրէ Հայ ազգին նկատմամբ:

Եթէ «Սէրվէթ»-ի տնօրէնը մեր նկատմամբ վատ տեղեկութիւններ արտագրէ, սրբազան պատրիարքը պիտի փութա՞յ դժգոհութեան գիր մը գրելու:

—Տիգրանակերտի կուսակալը փակեց Գերմանական որբանոց մը ուր կը պատասպարուէին Հայ

որբեր: Խարբերդի կուսակալն ալ սպառնացած է միևնոյն ընել տեղւոյն որբանոցին համար:

—Հանրաժանօթ բազմաշխատ Հայ գերասանապետ Տ. Ֆասուլեան, որ զինքը մաշող չարաշուք հիւանդութենէն առողջացած, ժամանակէ մը ի վեր Սլիվէն կը բնակէր, այս անգամ նամակով մը շնորհակալութիւն կը յայտնէ Վառնաի Հայ երիտասարդութեան որ իրեն ի նըպաստ ներկայացում մը սարքած էր վերջերս և Տօքթ. Օրմանեանի որ խնամած էր զինքը երկար ժամանակ: Դա հրապարակաւ իր շնորհակալութիւնը կը յայտնէ տեղւոյն Պուլկար երիտասարդութեան որ մասնաւոր երեւոյթ մը պատրաստեց ի նպաստ իրեն, և գլխաւորապէս Տ. Բոչթով գեղագործին, որ բարեհաճեցաւ առանց ու է փոխարինութիւն պահանջելու, մատակարարել հարկ եղած գեղերը: Տ. Ֆասուլեան կը յայտնէ նաև թէ, մօտ առնենք բժշկաներու խորհրդով տաք երկիր մը պիտի մեկնի:

### ՍԹՈՑԼՈՎԻ ԴԱՆԼԻՃԻՆ ԱՆԿՈՒՄԸ

Սուլթանը չը վաւերացնելով Արեւելեան երկաթուղեաց գընման պայմանագրութիւնը, Սթոյլովի դահլիճը ինկաւ: Նոր դահլիճին կազմութիւնը յանձնուած է կրէքովի որ նախարարապետ և միանգամայն Արտաքին գործոց նախարար կարգուած է, իսկ Ռատոսլավով կոչուած է ներքին գործոց նախարարութեան պաշտօնին: Նոր դահլիճին մեծ մասը կը բաղկանայ Ռատոսլավովի տնօրէնէ: Կը սպասուի Սօպրանիէին մօտակայ լուծմանը:

—)(—

սին մեկնելու համար. սրունքներս դեղեւեցան. ուզեցի պոռայ, ձայնս խեղդուեցաւ եւ երկար առն ուռնիին տակ արտասուեցի:

Հետեւեալ օրը այն արիւնայի օրն եղաւ զոր գիտես արդէն, եւ ալ եւս անոր մասին երբեք բան մը չի լսեցի»:

Լուս. եւ վար կը նայէի առանց բան մը տեսնելու եւ կը պատկերացնէի մաքիս մէջ բանտերու բոլոր հեռապատկերները. այն երկար օրհասականութիւնը որուն ենթարկուած էր թերեւս զժբազդ աղջիկը: Յանկարծ դէպի բարեկամուհիս մօտեցայ. ծուռգի եկած էր: Իր դէմքը դիակի պէս սփգոյն էր, իր աչքերը մեռած մէջ կերեւէին ու մատով ինձի կը ցուցնէր մացառ որուն մէջ կարծեցի տեսնել սուտերի մը տնջնելը. դեռատի աղջկան ուրուականը, մինչդեռ ինք խելագարի մը պէս կը ծածաղէր, արցունքներէ աւելի տխուր ծիծաղով մը:

ՉԱՊԵՆՈՒՄԸ

—)(—

ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԻՆԵՐՈՒՆ

«Ճարժում»ի երկրորդ տարե- շրջանը կը սկսի Փետր. 1ին:

Որովհետեւ մեր բաժանորդնե- րուն մեծագոյն մասին պայմանա- ժամը կը լրանայ այդ միջոցին, կը խնդրենք որ յառաջիկայ շրջանին կանոնադրապէս թերթ ստանալ փափաքողները բարե- հաճին շուտով նորագել իրենց բաժանորդագրութիւնը:

Նաև կը խնդրենք մեր գոր- ծակալներէն որ բարեհաճին անյապաղ զրկել մեզ անցեալ շրջանի մանրամասն հաշիւները և մնացորդ պահանջները:

ԿՈՅՐ ԿՈՒՍԱԿՅԱԿԱՆՆԵՐԸ

Գերմանական «Միւնխէնէր Ալ- կէմայնէ Զայթունկ» թերթի մէջ հրատարակուած է յօդուած մը որ արտասպառած է Սօֆիայի «Բէ- ֆօրմի» Մակեթոնական թերթին մէջ, և որ խօսելով հայկական յե- ղափոխութեան ներքին կազմա- կերպութեան վրայ՝ կը թուէ Հնչակեաններու և Դաշնակցա- կաններու գործունէութեան մա- սին ինչ ինչ մանրամասնութիւն- ներ: Այդ գրուածը, որ հայ մու- լտրած ինքի մը արտագրու- թիւնը ըլլալ կը թուի, ի միջի այլոց կրէ թէ հնչակեանները անարժան հայրենասէրներ էին, թէ կուսակցութեան գանձարա- նէն նազարէկեան 7,000 իսկ Արփարեան 3,000 օսմ. ոսկի գողցած են և այլն: Կաւելցնէ նաև թէ այժմ Հայ Կեղափոխա- կան Դաշնակցութիւնն է որ կը վայելէ հայ ազգի վստահութիւ- նը:

Մեր խորին պէզանքը այդ մու- լտանդ հայրենասէրներուն, ու ընդ իրենց կուսակցական կիր- քերէն հոգով ու մարմնով կուր- ցած՝ մեր բոլոր ներքին տկա- րութիւնները խեղաթիւրելով օ- տարին առջեւ պարզելու չափ ա- ռաջ կերթան: Թող համոզուած ըլլան այդ կոյր-կուսակցական թեթեւամիտները, որ այդ տե- սակ գրութիւնները պատիւ չեն բերեր ոչ հնչակեաններուն և ո՛չ ալ նոյն իսկ դաշնակցականնե- րուն:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՊՔԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Պուէն քաղաքս եկած տաճիկ պաշտօնեայ մը կը պատմէ թէ Զինուորական վարժարանին մէջ առաջ եկած ապստամբութեան մը առթիւ 73 սպաներ անհետա- ցան: Կը կարծուի թէ ծովը նետուած ըլլան:

Նոյն աղբիւրէն կիմանանք որ Երիտասարդ թուրքերը մօտերս ժողով պիտի գումարեն Պուլկա- րական քաղաքի մը մէջ, բողո-

քելու համար եւրոպական տէ- րութեանց՝ Թուրքիոյ մէջ տի- րույ ներկայ բռնապետական ըն- ժիմին դէմ:

—Պուլկարական հեռագրական գործակալութիւնը կը հազարյէ որ տաճիկական գաւառներու հա- մար իբր զինուորական մարզիչ, պաշտօնի կոչուած են գերմանա- ցի հարկբապաններ որոնք ի մօտ իրենց պաշտօնատեղի- ները պիտի սփռուին:

ՖԻԼԻՊՊԵԱՆ, ԿՂՁԻՔ

Ֆիլիպպեան կղզիներու բնա- կիչները ամսոյս 10ին, միա- ձայնութեամբ հանրապետու- թիւն յայտարարած են: Մալու- լտի մէջ գումարուած համաժողով մը յանձնարարեց Ակիւնալտօ սպիտամբապետին պատերազմ հրատարակել Ամերիկացուց դէմ: Ի պահանջել հարկին պիտի կա- րողանան 30,000 մարդ զէնքի տակունենալ:

Կանայք խնդրագիրներ կը մատուցանեն որպէսզի իրենց ալ թոյլատրուի այրելու պէս կուռել կղզւոյն աշտուութեան համար:

Հանրապետութեան հռչակման առթիւ սպանիացի գերիներու ազատման հրովարտակը ստորա- գրուած է: Կղերականները սակայն բանտարկուած պիտի մնան:

Ապստամբութեան պետերը համոզուած ըլլալով որ Ամերի- կացիք Մանիլէն զատ կղզիներուն ոչ մէկ մասին պիտի կարողանան վնասել, կատարելապէս վստահ կերեւան:

ԽՈՒՆ, ԼՈՒՐՆԵՐ

—Սօֆիայի գերմանական հիւ- պատուք մեծած է ընդունել Մակեթոնիոյ Կեդրոնական Գոմի- թէին յայտարարութիւնը: Գեր- մաններուն առ յայտնի թրքասի- րութիւնը գէշ տպաւորութիւն թողած է պուլկար հայրենասէր- ներու վրայ:

—Բ. Գուռը ծանուցագիր մը զրկած է Ռուսիոյ և Աւստրիոյ դեսպաններու Մակեթոնիոյ և Պուլկարիոյ մէջ տիրող շարժում- ներու և այդ երկու պետութիւն- ներու կողմէ Սօֆիայի դահլիճին եղած գիտողութեան մասին: Պուլկար կառավարութիւնը պաշ- տօնական խոստում տուած է որ ամէն միջոց ձեռք պիտի առնէ յառաջիկայ գարնան իր սահ- մաններէն Մակեթոնիա մտնել ուղղ ապաստակախմբերը արգի- լելու համար: Թուրք կառավա- րութիւնը կոմս Մուրափիէֆէն հեռագիր մը ստացած է ուր կի- մացնէ թէ Ռուսիա և Աւստրիա որոշած են ու և է Պալքանեան պետութեան մը կողմէ ըլլալիք յարձակում մը իսկոյն արգիլել:

—Մակեթոնական բարձրագոյն Գոմիթէն սկսած է իբր կուսակ- ցութեան օսկան, հրատարակել

Սաֆիայի մէջ «Բէֆօրմի» անու- նով շարժաթիւթեր մը, Պուլկա- րիէն և Ֆրանսերէն լեզուաւ, որ նպատակ ունի պաշտպանել Մակեթոնիան շահերը:

—Վերոյիշեալ թերթին Սօ- լունէն (Մակեթոնիա) կը գրեն թէ Կրէտացի մահմետական գաղթականներ, եկած են ստուարաննի տեղացի վայրագ խուժանին թիւը:

Այս նորեկները կաշխատին տեղացիները գրգռել քրիստոն- եաներու դէմ:

Նոյնպէս Կրէտական 16 զին- ուորական վաշտեր Մակեթոնիա փոխադրուելով սկսած են տեղա- ցի քրիստոնեայ տարրը անհան- զիստ ընել: Ռամազանի առթիւ եկած սօֆթաներ սմէն միջոց ի գործ կը դնեն մահմետական տարրը գրգռելու համար:

—Մասնաւոր աղբիւր կը օւ- ղեկանանք թէ Ռուսաց Արտա- քին գործոց նախարարը հեռա- գրով մը կիմացնէ թէ Պալքանե- ան յեղափոխական տարրերը պէտք չէ յայտնեն Ռուս աէրու- թեան կողմէ ու և օյնութեան մը վրայ:

Միւս կողմէ կաւելցնէ թէ լաւ կը լլայ որ Խորթիա անյապաղ ձեռնարկէ բարենորոգմանց գոր- ծին:

ՎԵՐՁԻՆ, ԼՈՒՐ

Սօֆիայէն քաշուած վերջին հեռագիր մը կը հազարյէ որ Ե- րեքօրեայ նախարարական տաղ- նապէ մը ետքը, նոր նախարա- րութիւնը կազմուած է հետեւե- եալ կերպով:

Կրէքով—արտաքին գործերու և նախարապետ, Ռատօսլավով— ներքին գործերու, Բէշէֆ—Դա- տակաւն գործերու, Թ. Իվանչօֆ—Լուսաւորութեան, Թօնչէֆ—Հանրային շինութիւններու, Թէ- նէֆ—Ելեւմտից, Նաչչիլի—Վա- ճառականութեան և Երկրագոր- ծութեան և Բօլքոֆիկ Փափրի- քով—Պատերազմական գործե- րու:

ԿՈՐՍՈՒՄ

Սերաստիոյ Դասկալ գիւղի Յարութիւն Զաքէեան երիտա- սարգը, որ եր՛ու տարի առաջ Վառնաի քարափը կաշխատէր, անյայտ եղած է: Կը խնդրուի որ յայդ անձի մասին անդեկութիւն ունեցողները հաճին գրել խմբա- գրութեանս:

ՄԵԼՔԻՍԵՆԵԿ ԵՊՍ. ՄՈՒՐԱՏԵԱՆՑ

Պատմութիւն Բիւստոնեական Եկեղեցւոյ ԿԱԼՂՑ  
Տպարան «Անի» 1898  
Գին 3.50 ֆրանք  
Կը ծախուի Կ. Պոլիս Պ. Պալենց գրատան և Փօքչան (Ռուսմանիա) Վ. Մամիկոնեանի մօտ:

Պ Օ Ր Ս Ա

Վաւոն 19 Յունուար

ՊՈՒՂՏԱՅ  
Վաւոն. լիպրա 55—58, հէքթօլ. 9.40—10.60 ֆրանք  
Արապա, լիպրա 55—60 հէքթօլ. 9—12 ֆրանք

ԱՐԲԱ  
Լիպրա 42—50 հէքթօլ. 6.40—6.80 ֆրանք

ՄՈՒՐԻ  
Վաւոն, 55—57 լիպրա, 6.10—6.20  
Առապա, 55—60 լիպրա, 6.40—6.80  
Կիւնկէ 15—20 վաւոն, 25—30 սոսպա կէլմէքաէ տիր:

ՏԱՐԻ  
Կիւնկէ 12 արապա կէլմէքաէ տիր. 58—60 լիպրա, 5.40—5.80 ֆրանք  
Առապա մուսկէլէսի նարթէն 21 ֆրանք հիսապը իւլ տիր:

ԲԱՁՈՒԱՎԷՊ  
ԱՄՍԱԹԵՐԹ  
57րդ ճարի  
Տարեկան գին 10 ֆր. — 4 բուպ- լի. — 2 Տրար:  
Հասցէ՝ Բէտաքսիոս ար լա որվիւ Բազմավայ. Ս. Լազար:  
Վրնիզ (Իթալի)

ԼՈՒՍ ՏԵՍԱԻ

Տէր Ղեւոնդ Ք. Փափազեանի հայերէն—ռուսերէն տարե- ցոյցը, պատկերազարդ և ճոխ պարունակութեամբ: Գինն է թղթակազմին 1 ֆր. լաթա- կազմին 1.50 և փառակազմին 2 ֆր.:  
Գիմել հեղինակին, Կալաց:

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ



Եթէ կուզէք հագնել կօ- չիկներ որոնք իրենց վրայ միացունեն ձեռի և երկուս- կունութեան կատարելու- թիւն և մանաւանդ գինի չափաւո- րութիւն, առանց վարանելու դիմե- ցէք Ստեփան Խորասանճեանի, Մու- սալլա, բաղնիք փողոց, հաճի Հասան ԼՔէնտիի օթելին սակ: հաւատացէք թէ ստիթէն պիտի օգտուիք:

ՏՊԱՐԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ Օ. ԲԱՐՍԵՂԵԱՆԻ

ՎԱՌՆԱ  
Երկրորդ բազ. Երբէկեան փողոց.  
Ստակալը Ձեռնի կից.

Կը տպագրուին հայերէն, պուլկարե- լէն, գաղղիերէն, յունարէն, տաճիկերէն, և այլ լեզուներով այցեանուն, հասցե- տուն: Հարանեկան հրատարակիչ, ազ- րագրութիւն, նամակագրութիւն, պահա- րան, մահազգ, վաճառականական ամէն տեսակ գործեր, գեք, լրագիր, և այլն:

Գուճաւը և ուկեգոճ զարգացրածե- րու համար ամէն լեզուէ երկուսու և մասնաւոր գործիքներ կը գտնուին:

ՄԵՍ ԵՆԱՄՔ ԵՒ ՄԱՔՐՈՒԹԻՒՆ ԳԻՆԵՐԸ ՅՈՅԺ ԳԻՐԱՄԱՏԵԼԻ

Որչիւ տպագրուի եւ յայտարարուի եւ չիւստիւսի եւ չիւստիւսի:

Отговорникъ: А. СУКЯСОВЪ  
Печатница „Взаимность“. Варна